



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



Օ Ր Ր

ԼՍՏՈՒՆԾՊԸՇ ՏՈՒԹԵԼՄԻ

ԱՆՑԸՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ

ՋՄԻՒՌՆԻՇ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԿՈՒՆԵԼՄԱՍ ԿՐԻՓՓԻԹԻ

4574

75

51



ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՅՑԵԼՈՒ

ԿԵՄ

Բացատրութիւն Սուրբ Գրոց երևելի  
մասերուն, անոնց վերաբերեալ  
աղօթքներովը :

ԵՇԽԵՏԵՍԻՐԵՆՅ

Վերապատուելի Մ. Ռիլլմ' Ղօվեդ, երէց  
Ընգղիոյ և Իռլանտիոյ միացեալ  
եկեղեցւոյն :



Ի ՏՊԱՐԱՆԻ ԿՈՒԼԵԿԼԱՐՈՍ ԿՐԻՑՖԻԹԻ

1850



# ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԱՅՑԵԼՈՒ


ԿԵՍ

Բացատրութիւն Սուրբ Գրոց երևելի  
մասերուն, անոնց վերաբերեալ  
աղօթքներովը :

## ԵՇԽԵՏԵՍԻՐԵԱՅ

Սերապատուելի Մ. Ուիլլեմ Ղօվէդ, երէց  
Անգղիոյ և Իռլանտիոյ միացեալ  
եկեղեցւոյն :

## ՄԵՍՆ ԵՐԿՐՈՐԳ



## Ի ԶՄԻՒՌՆԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԿՈՒԼԵԵԼՄՈՍ ԿՐԻՓՓԻԹԻ

1850

4575







Աս պատուական գրքիս գիտուն և երկիւղած հեղինակը՝ յատկապէս աշխատասիրած է ան բարեպաշտ մարդոցը համար, որոնք Անգղիայի մէջ ստիճարար այցելութեան կ'երթան աղքատ ընտանիքներու, մանաւանդ հիւանդներուն, բանտարկեալներուն, և որ և իցէ նեղութեան և տրտմութեան մէջ գտնուողներուն. որպէս զի յիշեալ եղջայրասէր Այցելուները գիւրութիւն մը ունենան ասանկ խղճալիները միտիթարեղու Աուրբ Կրոց խրատական և միտիթարական քաղցր խօսքերովք. և աս պատճառաւ՝ գրքիս անունն ալ ՔՐԻՍՏՈՒԵԼԵՅ ԵՅՅԵԼՈՒ Գրած է:

Եւ որովհետեւ այսպիսի հոգեշահ գիրք մը ոչ միայն աղքատաց և տառապելոց՝ հապա ամէն ջերմեանդ Քրիստոնէի շատ հարկաւոր և օգտակար է, վասնորոյ արժան համարեցանք անոր Երկրորդ մասն ալ, որ է «Վացատրութիւն և աղօթք Մարկոսի Աւետարանին քանի մը հատուածներուն վրայով», թարգմանութեամբ՝ ի լոյս ընծայելու. աղէկ գիտնալով որ Հայոց ազգին ջերմեանդ բարեպաշտութեանը ևս փառաբելէ գրքոյի մը պիտի ըլլայ ասիկայ, և թէ այսպիսի Քրիստոնեայ Այցելու մը՝ անտարակոցս սիրով պիտի ընդունին ամէնքն ալ:

Աւերջապէս՝ գործոյս Աերապատուելի հեղինակին հետեւելով, (ինչպէս որ կ'ըսէ իր յառաջարանութեանը մէջ) մենք ալ աս մեր թարգմանութիւնը խնարհաբար Աստուծոյ խնամոցը կը յանձնենք, որուն սուրբ խօսքը բացս սրուած է հոս, և շարունակ Անոր օրհնութիւնը և օգնութիւնը խնդրուած՝ Աղօթքներուն մէջք. Աղաչելով մեր Տէրոջը և Փրկչին Հիսուսի Քրիստոսի, որ եկաւ «աղքատներուն Աւետարան քարոզելու», որպէս զի աս գրքոյիլը՝ Տպէտներուն Արժուութեանը, ջերմեանդներուն Հիւնութեանը, նաև՝ Աեղութեան և Տրտմութեան մէջ գտնուող Աստուծոյ ծառաներուն՝ Միտիթարութեան և Քաջալեբութեան մէկ միջոց մը ըլլայ. Ամէն:

# ՅԸՆԿ ԳԼԽ ՈՅ

Գ Լ Ո Ւ Խ

Ե Ր Ե Ս

|     |                                       |    |
|-----|---------------------------------------|----|
| Ս . | Շնորհաց մէջ Աճուսնի . . . . .         | 1  |
| Ի . | Յիսուս նաւին մէջը քնացած . . . . .    | 8  |
| Գ . | Լեզէներ հալածուած . . . . .           | 13 |
| Գ . | Ընհանգիստ Խղձմտանք . . . . .          | 19 |
| Խ . | Սեղբին Սեռեղութիւնը . . . . .         | 27 |
| Չ . | Քրիստոսի մանք Տղաքը օրհնելը . . . . . | 33 |
| Խ . | Քրիստոսի մահուան Տաղնապը . . . . .    | 38 |

# ՔՐԻՍՏՈՆԵՆԵՆ ԵՅՅԵԿՈՒ

ԳԼՈՒԽ ԵՌԵՊՒՆ

ԸՆՈՐՀԵՅ ՄԷՊՆ ԵՃՈՒՄՆ

Մարի . Գ. 26—29 :

Եւ կըսէր . Եստուծոյ թագաւորութիւնը ասանկ է . որպէս թէ մէկ մարդ մը հողին մէջը սերմ՝ ձգէ , ու քնանայ և արթըննայ գիշեր ու ցորեկ , և սերմերը բուսնին ու մեծնան . և ինքը չի գիտնայ ,

Որ հողը ինքիրմէն պտուղ կուտայ . առաջ՝ խոտը , ու ետքը հասկը , և անկէ ետեւ լեցուն ցորենը հասկին մէջ :

Իայց երբոր պտուղ տայ՝ շուտ մը մանգաղ կը խրկուի , ինչու որ քաղելուն ատենը հասած է :

**Ե**ՍՏՈՒԾՈՅ թագաւորութիւնը՝ որուն վըայով կըխօսուի հոս , կընշանակէ Մեծտարանին ազդեցութիւնը մարդոց սրտերուն մէջը : Ըն հաւատարիմ քարոզիչները՝ որ հեռաւոր տեղուանք կ'երթան Մեծտարանը քարոզելու համար , ճիշդ սերմանացանի մը կընմանին , որ հողին մէջը սերմ կը ցանէ :

1. Ախի՛ աղէկ սերմը ցանելու ժամանակը կայ, որ առեն սերմանացանը կըտանի աղէկ սերմը՝ պատուական սերմը, իր կողովին մէջ դրած: Ինքացի մշակը չցաներ ան սերմը որ փտտած է, և ոչ խկ որոմ կամ անպիտան խոտ և կամ ցորենի յարկ կըցանէ: Թէ որ ասանկ ընէ՝ իր ամէն աշխատութիւնը փուճը կ'երթայ: Մասնկ ալ հաւատարիմ քարոզիչը՝ Մետարանին բոլոր պատուական ճըշմարտութիւնները կըքարոզէ. անիկոյ կըծանուցանէ Մտուծոյ բոլոր կամքը (Վարժ. ի. 27). երբեմն ալ կըպարտաւորի յայտնել թէ ի՛նչ թշուառ մեղաւորներ էք: Ուստի երբ որ անմիջապէս ձեր սիրտը կըրիզձիկի, և որպէս թէ ձեր մեղքին պատճառովը երկիւղներով ու տրամուլթեամբ կըհերկուի ու կըկտկուշնայ, անատենը ժամանակ է խօսելու՝ Յիսուսի սիրոյն վրայով՝ որ ինքը մեռաւ որպէս զի մենք ապրինք: Մնատենը յարմար ժամանակ է նաև յորդորել ձեզ՝ որ աղթք ընէք հոգւոյն սրբոյ պարգևը ընդունելու, որ ձեր հոգիները՝ մեղաց մահուանէ արգարութեան կեանքին յարուցանէ:

2. Երկրորդ՝ ուշադրութիւն ըրէք որ սերմը արմատ արձակելու ժամանակը կայ: Սերմը կըբուսնի և կ'աճի. բայց նախ պէտք է որ գետնին տակը արմատ արձակէ (Ասայ. Լէ. 31): Ինչպէս որ գետնին տակը ըլլալու գործ մը կայ, նմանապէս նաև սրտին մէջը կատարուելու գործ մը կայ. և ասանկ ար-

մատ արձակելու գործը՝ նոյն ինքն ամենակարող  
 Աստուծոյ յառաջ կուգայ . քանզի Աստուած  
 կ'աճեցունէ զանիկայ : Ամենէն խելացի մշակը ևս  
 կարող չէ ցորենի հատ մը աճեցընել . նմանա-  
 պէս Աւետարանին խիստ յաջողակ քարոզիչները  
 անգամ չեն կրնար սուրբ Պրոց ամենէն պարզ մէկ  
 խօսքը օգտակար ընելու : Արքայ մենք սրտանց կը  
 հաւատանք , անատենը բանը արմատ կ'արձակէ :  
 Իսկոյն Աստուած միայն կրնայ տալ մեզի ան կեն-  
 դանի հաւատքը , ինչպէս որ կըսէ Պօղոս առա-  
 բեալ . «Այս տնկեցի, Ապոլոսը ջուր տրվաւ, բայց  
 Աստուած աճեցուց : Ասկէ ետե ոչ ան տնկողը  
 մէկ բան մըն է ու ոչ ան ջուր տրվողը , հասպա  
 Աստուած՝ որ աճեցուց» , ԹԻՄՈՒԹ. Գ. 6, 7 :

3. Ինչպէս որ երկնալու ալ ժամանակը կայ .  
 որ ատեն ցորենին բոյսը հողէն դուրս կ'ելլէ . թէ-  
 պէտեւ դաշտին հողը իր թանձրութեամբը և ծանրու-  
 թեամբը ծածկած է զանիկայ , այսու ամենայնիւ ա-  
 նոր սուր ծայրը և փափուկ խոտը կը պատուէ հողը  
 դուրս կ'ելլէ , ու մշակը տեսնելով զանիկայ կ'ուրա-  
 խանայ . վասն զի ապագայ արգիւնքին առաջին նշանը  
 կը տեսնէ : Ի՞նչ որ պղտիկ քար մը արգելք ըլլայ  
 անոր , աս խոտը տակաւին ճամբան կը գտնէ մէկ  
 կողմէն դուրս ելլելու . ու ցորենին ցողունը քանի  
 որ աճի՝ կրնայ ան քարը տեղէն խախտելու : Ա-  
 հա առանկ կը ըլլայ ան մարդիկներուն ալ՝ որոնք  
 Աւետարանին զօրութեամբը դարձի կուգան : Ի՞նչ

որ հաւատքը միանայ ձեր լսածին հետ, անշուշտ  
 ժամանակին՝ պիտի ցոյցնէ՝ ինչ որ կը հաւատար .  
 ու ձեր սրտերէն պիտի բղխին աս խօսքերը .  
 «Պէտք է ինծի որ ես դադարիմ իմ առջի մեղքե-  
 րէս . պէտք է որ հրաժարիմ իմ առջի ընկերնե-  
 րէս . ալ չեմ կրնար ամչնալ Քրիստոսէ և իր  
 խօսքերէն» . և անշուշտ ասոր համեմատ վարմունք  
 մը պիտի ունենար : Ահ, ինչ ցանկալի տեսարան  
 մըն է ան՝ երբոր դարձի եկողները այսպէս կ'ըսեն :  
 Եւստուած շատ անգամ առջի բերանը երկչոտութիւն  
 մը ունին . և կրնամանին ան մարդոցը՝ որ մեծ գործ  
 մը ունին ընելու, բայց ուժերնին քիչ է : Սակայն  
 իրենց Փրկչին օգնութեանը կ'ապաւինին, ցորենին  
 խօտին պէս դժուարութեամբ ճամբայ կրբանան  
 իրենց . ու Յիսուս ալ շնորհք կուտայ անոնց որ  
 դժուարութեանց յաղթեն և առաջ կրթան . և  
 վերջապէս քաջալերութիւն կ'ունենան ըսելու .  
 «Ես Տէրոջն եմ» :

Արբէք՝ չարհամարհենք զանոնք՝ որոնց վրայ  
 շնորհքը «կսած է իր ներգործութիւնը ընել . վասն  
 զի Եւստուած կարող է յառաջացընել զանոնք,  
 մինչև որ ցորենի նման կատարելապէս հասուն-  
 նան : Խիստ մեծ սուրբերը անգամ՝ ատենօք տկար  
 սկսողներ էին :

4. Պտուղ բերելու ալ ժամանակը կայ : «Եւստու-  
 խօտը, ու ետքը հասկը, և անկէ ետև լեցուն ցո-  
 րենը հասկին մէջ» : Խօտը կրճանուցանէ թէ

ցողունը աճելու վրայ է . հասկը կըցուցընէ թէ պտուղին ատենը դալու վրայ է . իսկ լեցուն ցորենը հասկին մէջ՝ թէ պտուղը կատարելապէս հասած է : Եսանկ ալ թէ որ դուք աճելու ըլլաք Վրիստոսի վրայ արմատանալով և հաստատելով , արդարութեան պտուղներ պիտի բերէք . այսինքն՝ դուք պիտի սիրէք զԱստուած և ծառայէք անոր . պիտի մօտենայք անոր՝ Վրիստոսի միջնորդութեամբը . աղօթք պիտի ընէք որ անոր Սուրբ Հոգին ձեր մէջը բնակի , ու ձեզի հետ ըլլայ . պիտի սորվիք ամէն մարդու հետ սիրով վարուիլ , մանաւանդ անոնց հետ՝ որ Վրիստոսինն են : Արտերնիդ քննեցէք թէ արդեօք բարի սերմը հարիւրաւոր պտուղ կուտայ՞ ձեր ներսիղին , կամ վաթսնաւոր կամ երեսնաւոր : Ա՛հ . թէ որ դուք կըսիրէք Յիսուսը և իր խօսքը , անշուշտ պիտի փափագիք փառաւորել զանիկայ շաք պտուղներ յառաջ բերելով :

5. Հասուննալու ալ ժամանակը կայ . որ ատեն բոլոր հասկերը պատրաստ կ'ըլլան հնձուելու համար : Արջափ կ'ուրախանայ մշակը՝ երբոր կըտեսնէ ոսկեգոյն հասկերը որ գլուխնին ծռած են իրենց ծանրութեամբը ու կըհրաւիրեն՝ մանգաղը որ երթայ հնձէ զանոնք : Ենատենը փունջ փունջ կըկապուին և կըզիզուին շտեմարաններուն մէջը : Եսանկ ալ Տէրը՝ երբոր ատենը գայ , պիտի խրկէ իր հրեշտակները որ ժողովեն իր հաւատացեալ



Ժողովուրդը՝ երկնից արքայութեանը մէջ : Վան-  
զի անիկայ միայն գիտէ թէ ե՛րբ անոնք կատա-  
րելապէս կը հասունանան . ու երբոր անոնք հասուն-  
ցած են , կը հաւաքէ զանոնք : Անոնց հասունու-  
թիւնն է իրենց մեծ խոնարհութիւնը , մեծ հա-  
ւատքը , մեծ սրբութիւնը , բոլորովին աշխարհի  
մեռնիլը , միշտ հոգևոր կեանք մը ունենալը , ու  
երկնային բաները խորհիլը :

Սիրելի՛ բարեկամ՝ ներողամիտ եղիր որ ան-  
գամ մըն ալ հարցընեմ քեզի . Սերմը քու սրտիդ  
մէջն ալ արմատ արձըկե՞ց : Աստուծոյ խօսքը քու  
մտքիդ մէջը տպաւորեցա՞ն արդեօք . | ու Աստուծոյ  
Հոգին սկսա՞ծ է հաւատք ներգործել քու հոգի-  
իդ մէջը : Ա՛հ , երբէք մի՛ դադարիր կարգալէն և  
աղօթք ընելէն մինչև որ շնորհաց մէջը արմատ ար-  
ձակես սրբութեան պտուղներ տալով : Աւ երբոր  
անգամ մը այս շնորհաց գործը կը սկսի , շարու-  
նակ աղօթք ըրէ որ օր ըստ օրէ աւելի աճիս ա-  
նոր՝ մէջը : Ա՛հ , փնտրուէ աս անձառելի երջանկու-  
թիւնը , այսինքն՝ Հասունութիւնը՝ երկնից հա-  
մար :

## Ե Ղ Օ Թ Վ

Ա՛լ Տէր՝ կ'աղաչենք քեզի որ յաւիտենական  
կենաց սերմը մեր սրտերուն մէջը սերմանես : Ա-  
ւաջնորդէ՛ մեզի որ մենք ճանչնանք Վեղ և քու

Որդիդ Յիսուս Քրիստոս մեր փրկիչը : Քու  
 Սուրբ Հոգիդ ցօղովը ուողէ մեր ծարաւցած  
 հոգիները , ու զօրացուր ան ցանուած սերմը որ  
 խորին արմատ արձակէ ու դէպի վեր պտուղ տայ .  
 (Լւսայ . 17 . 31) : Պահպանէ զանոնք որ տկար են  
 շնորհաց մէջ . մի' թողուր որ հպարտութեան որ-  
 դը անոնց արմատը ապականէ . և սուտ վարդա-  
 պետութեան հովը փչելով փտտեցընէ զանոնք :  
 Վթուլթեամբ նայէ՛ մեզի մեր տկարագոյն օրերը .  
 աւելի ևս զօրացո՛ւր մեզ միշտ , և տո՛ւր մեզի ա-  
 ճիլ և առատանալ արդարութեան ամէն պտուղ-  
 ներովը : Եւ վերջապէս՝ ինչպէս որ ցորենի որայ-  
 ները ժամանակին շտեմարաններու մէջ կը ժող-  
 վուին , ասանկ ալ դուն ժողվէ մեզ ապահով լտեղ  
 մը՝ վերը՝ երկինքին մէջ՝ մեր Տէրօջը Յիսուս Քր-  
 իստոսի միջնորդութեամբը . Եմէն :

## ԳՂՈՒԽ Բ :

ՅԵՍՈՒՍ ԿԵՒԻՒՆ ՄԷՉՔԸ ՔՆԵՅԵՆՕ

Մարի . Գ , 37—41 :

Եւ մեծ ալէկոծութիւն մը եղաւ հովի , ու ալիքները նաւին մէջը կըլեցունէր , անանկ որ դրեթէ լեցուն էր :

Աւ ինքը նաւին խեղբին վրայ բարձի վրայ կըքնանար . արթընցուցին զինքը՝ և կըսէին , Վա՛րդապետ՝ քուկին հոգի չէ՞ որ մենք ահա կըկորնչինք կոր :

Եւ արթընցաւ սաստեց հովին , ու ծովին ըսաւ . Ղադրէ՛ լուսկեցիր . ու հովը դադրեցաւ , և մեծ խաղաղութիւն եղաւ :

Աւ ըսաւ անոնց . Ինչո՞ւ ատանկ վախկոտ էք , տակաւին հաւատք չունիք :

Աւ խիստ վախցան , և կըսէին իրարու . Արդեօք ո՞վ է տսիկայ , որ հովը և ծովը ասոր կըհնազանդին :

**ՏԷՐՆ** մեր Յիսուս Քրիստոս մեծ ջանք մը ունէր ժողովըդոց քարոզելու : Առակներով անոնց խօսելէն ետքը ծովեզերքին քով , երբոր իրիկուն եղաւ ուզեց որ անցնին ծովին մէկալ կողմը : Եւ որ ատեն Յիսուս մտաւ նաւը՝ այնքան յոգնած էր , որ քիչ մը ատենէն ետքը քնացաւ : Անատենը յանկարծ մեծ ալէկոծութիւն մը եղաւ հովի , ու ալիքները նաւին մէջը կըլեցունէր , անանկ որ նաւը ընկըղմելու վրայ էր : Աշակերտները շատ վախնալով իսկոյն վազեցին արթընցնելու զանիկայ , և աղաղակեցին ըսելով . “Վա՛րդապետ՝ քուկին հոգի չէ՞ որ մենք ահա կըկորնչինքկոր” : Տէրն մեր շուտ

մը դադրեցուց արէկոծութիւնը . ու ետքը գարձաւ  
ըսաւ անոնց, “Ինչո՞ւ ատանկ վախկոտ էք, տակաւին  
հաւատք չունի՞ք” : — Եւ խօսքով ըսել չէր ուզեր  
թէ անոնք բողոքովին անհաւատ են, հասցա՛ թէ աս  
դիպուածին հաւասար հաւատք չունէին : Եւնոնց  
հաւատքը թերի էր . քանզի “թերահաւատ” էին :

Եւսպէս մենք ալ երբեմն նեղութիւններու մէջ  
կըտառապինք . բայց մեր թշուառութիւնները գու-  
ցէ սաստիկ փորձութիւններէն յառաջ կուգան :  
Եւսանկ կըթուի որ մեր անօրէնութիւնները պիտի  
յաղթեն մեզի , և կըմոռնանք թէ ո՛վ է ան որ կը  
ներէ անցածը , ու մեզի բաւական շնորհք կուտայ  
դալու օրերուն համար : Թէ որ մենք աւելի միա-  
մըտութեամբ հաւատայինք Հիսուսի և համբերու-  
թեամբ սպասէինք անոր , անիկայ շուտով կըզայ-  
րեցընէր նեղութիւններուն հովերը ու ալիքները :  
Եւ փոխանակ խորունկ ջուրերուն մէջը ընկղմելու՝  
պիտի զգայինք թէ Եւն բռնե՛ր է մեզ ապահով իր  
ձեռքին մէջը :

Եւսանկ պարապաներուն մէջ անշուշտ պէտք է  
մեզի որ Եւետարանին աս պատմութիւնը յիշենք ,  
մտածելով թէ երբօր Հիսուս նստին մէջն է , աշա-  
կերտները պարտին ապահով ըլլալ : Անզի պէտք  
եղածը հաւատքն է :

Բայց ի՞նչ կընշանակէ աս “թերահաւատ” բա-  
ռը , որ մեր Վրկիչը կըսէ : Անք կրնանք բացառ-  
րել ասիկայ հետագայ կերպովը :

1. Մեր տկար հաւատքը երբեմն կը երկբայի Վր-  
րիստոսի սիրոյն վրայ:—Աշակերտները մեծ ան-  
համբերութիւն մը ցուցուցին, երբոր ըսին իրենց  
վարդապետին: «Վուկին հոգդ չէ՞, որ մենք ահա  
կը կորնչինք կոր»:—Վո-կին էֆֆ չէ՞ մի. ի՞նչպէս  
կրնանք ասանկ ըսել Ա՛նոր՝ որ զինքը մեղաւորնե-  
րուն համար փրկանք տուաւ, որ անոնք չկորսուին,  
հապա յաւիտենական կեանքը ընդունին: Ա՛նիկայ  
կրսէ. իր ոչխարներուն մէկն ալ պիտի չկորսուի,  
անիկայ գիտէ իւրաքանչիւր հաւատացեալին ա-  
նունը, իր ոչխարները իրենց անունովը կը կանչէ:  
Ի՞նչպէս ուրեմն կրնանք երկբայիլ անոր սիրոյն  
վրայ:

2. Արբեմն թերահաւատութիւն ունինք անոր ի-  
մաստութեանը վրայով: Մենք կը խորհինք թէ Ա՛-  
նիկայ պէ՞տք է որ թողու մեր հոգիները՝ որ սաս-  
տիկ փորձութեան մէջ իյնան, կամ եկեղեցին այն-  
պիսի մեծ վտանգ մը կըրէ, որպէս թէ մենք աւելի  
աղէկ կրնանք կառավարել աս բաները, և կը մոռ-  
նանք թէ՛ «Աստուծոյ յիմարը մարդիկներէն աւել-  
ի իմաստուն է», ԹԿԻՆԻ, Թ, 25: Հիսուս կարող  
է անանկ միջոցներով մատակարարել մեզի իր մեծ  
ողորմութիւնները, որոնք մենք կը կարծենք թէ  
հակառակ միջոցներ են:

3. Ինչո՞ւ համար անոր հաւատարմութեանը վրայ  
կը երկբայինք: Մտքերնիս բերնք թէ անոր անունն  
է «Ա՛մենը՝ հաւատարիմ ու ճշմարիտ վկան», Յայր,

իք, 14 : Իրաւ մենք փոփոխաւիտ ենք , անիրաւ և անհաւատարիմ . բայց անիկայ Մատուած է և անփոփոխելի : Ընոր ուխտը “ կարգաւորեալ է ամէն բաներու մէջ , և ապահով ” : Ընիկայ կըսէ : “ Ես Մատուած անփոփոխ եմ . վասնորոյ դուք Յակորայ որդիքդ բնաջինջ չէք ըլլար ” . Սաղմ . 17, 6 :

4 . Եւ միժէ երբեմն չենք երկբայիր անոր կարողութեանը վրայ : Ընք կարծեր թէ այնպիսի անյոյս վիճակի մը մէջ ենք որ բան մը չկրնար ազատել զմեզ : Ո՞վ ամօթալի անհաւատութեանս : Ովկիանոսին բոլոր ալիքները կաթիլ մը ջուր են անոր քովը : Դժոխքին բովանդակ զօրութիւնները՝ հոգիի մը դէմ յարձակուած , Յիսուսի առջևը աւելի չեն քան որչափ շուղ մը հովին առջևը : Չանձախարիթի պէս մեր սև մեղքերը՝ Ընիկայ կարող է լուանալ ու մաքրել իր անգին արիւնին մէկ կաթիլովը : Սեր տխրագին նեղութիւնները կարող է Ըն փարատել իր դէմքին մէկ ժպիտովը :

Սիրելի՛ բարեկամ , թէ որ երկիւղներով , փորձութիւններով ու ցաւերով տակնուվրայ եղած ես , անոնց ամէնն ալ տա՛ր Յիսուսի առջևը : Սակայն Ընիկայ պիտի հարցընէ քեզի անաչառապէս , թէ՛ “ Ո՞ր է քու հաւատքդ ” : Խոնարհէ՛ անոր առջևը ու հաւատքի կարօտ ըլլալդ ցուցուր . ու աղաչէ՛ աւելի շնորհք ընդունելու համար : Յուցուր աղօթքիդ մէջը քու ունեցած քիչ մը հաւատքդ : Տկար հաւատքը արդաբև հաճելի չէ Յիսուսի . բայց չար-

Համարհեր զանիկայ : Միտքդ բեր թէ Մնիկայ շատ մօտ է քեզի , միշտ պատրաստ է լսելու , բարձրաձայն աղաչէ Մնոր ուրեմն , որ դուն օգնութեան շնորհքը գտնաս պէտք եղած ատենը (Եբր . 7 . 16 :

### Ե. Գ. ( ) Թ. Վ.

Ո՛վ Տէր՝ որ քու որդւոյդ Յիսուս Վրիստոսի ձեռօքը բաւական շնորհք պատրաստեցիր քու ժողովուրդիդ համար , որ միշտ օգնէ անոնց պէտք եղած ատենը , օգնէ մեզի՝ կ'աղաչենք , որ մեր ամէն փորձութեանց և նեղութեանց մէջ մօտենանք քեզի Մնոր միջնորդութեամբը : Դուն՝ որ կըխնամես մեզ՝ կարողացուր մեզ որ մեր նեղութեան բեռը քեզի ձգենք : Մենք կըցաւինք քու առջևդ մեր հաւատքին տկարութեանը համար , Դուն քու ողորմութեամբդ աճեցուր մեր հաւատքը : (Սող քու Սուրբ Հոգիդ մեր հոգիները զօրացընէ այնպիսի զօրութեամբ որ երբէք չմեղանչենք կամ չյուսահատինք : Եւսէ՛ մեր աղաչանքը ո՛վ Տէր որ երբէք չես քնանար ու չես նիրհեր , և անանկ առաջնորդէ մեզի առ վշտալի աշխարհիս ալիքներուն մէջը , որ կարող ըլլանք վերջապէս հասնիլ յաւիտենական նաւահանգիստը , մեր Տէրօջը Յիսուս Վրիստոսի ձեռքովը , Եւմէն :

# Գ Լ ՈՒԽ Գ :

Լ Ե Պ Է ՈՒՆ Ը Հ Ե Լ ԵՆՆ ՈՒՆ Ծ :

Սարգ. Ե . 1—20 :

Եւ եկաւ ծովին մեկալ կողմը Գերեզասացոց աշխարհը :

Եւ երբոր ինքը նաւէն ելաւ՝ գերեզմաններէն մարդ մը պատահեցաւ իրեն , որ պիղծ դեռ ունէր . որուն բնական տեղնալ գերեզմաններուն մէջն էր . ու շոթայով ալ մէկը չէ՛ր կրնար անիկայ կապել . որովհետեւ շատ անգամ՝ ոտնակապերով և շղթայներով կապած էին , ու շոթայները խղտրվեցան իրմէն , և ոտնակապերը կոտորտեցան , ու մէկը չէ՛ր կրնար անիկայ յաղթել .

Ինչու որ դիշեր ու ցորեկ ամէն ատեն գերեզմաններուն մէջ՝ և լեռները կրկանջվառտէր , ու ինքըզինքը քարերով կրճեճէր :

Երբոր հեռվանց Յիսուսը տեսաւ՝ վազեց և երկիրպագուած իւն ըրաւ անոր . մեծ ձայնով մը կանչեց՝ ու ըսաւ , Դուն իմ հետս ի՛նչ բան ունիս Յիսուս՝ Որդի՛ Մտուծոյ բարձրելոյ . քեզ Մտուծով կերզվընցունեմ՝ իս մի՛ տանջեր :

(Որովհետեւ կրէր անոր , Պիղծ դեռ ելի՛ր ատ մարդէն :

Եւ հարցուց անոր թէ՛ Մտուծոյ ի՛նչ է . ու ըսաւ անոր , Իմ անունս Լեզէնն է , ինչու որ մենք շատիւր ենք :

Ու շատ կաշաւէին իրեն , որ իրենք աշխարհէն դուրս չի խրկէ :

Եւ հոն լեռանը մօտը խոզի մեծ երամակ մը կար՝ որ կարածէին :

Բոլոր դեները աղաւեցին իրեն՝ ու ըսին , Մեզ խոզերուն խրկէ , որ անոնց մէջը մտնանք :

Եւ հրաման ըրաւ անոնց . ու երբոր պիղծ դեները ելան՝ խոզերուն մէջը մտան , և երամակը բարձր տեղէն ծովը վազեցին , ( երկու հազարի չափ կային ) ու ծովին մէջը խղզրվեցան :

Եւ խոզարածողները փախան , ու պատմեցին քաղաքը և դեղերը , և անոնք ելան տեսնելու՝ թէ ի՛նչ բան է որ եղաւ :

Եկան Յիսուսին , ու տեսան դիւահարը , որ Լեզէնն ունէր՝ հագված և խելքը վրան եկած նստեր էր , ու վախցան :

Եւ անոնք որ տեսեր էին , պատմեցին անոնց՝ թէ ի՛նչ եղաւ դիւահարին , և ի՛նչ նախ խոզերուն վրայ :



Ու սկսեցին աղաչել իրեն , որ իրենց երկիրէն ելթայ :  
Եւ երբոր անիկայ նաւը մտաւ , դիւահարը կաղաչեք իրեն՝  
որ իր հետը ըլլայ :

Եւ Յիսուս թող չիտուաւ անոր , հապա ըսաւ իրեն , Վնաս  
քու տունդ քու ընտանիքներուդ՝ ու պատմէ անոնց ինչ որ  
Տէրը քեզի ըրաւ , և ողորմեցաւ քեզի :

Ու դնաց , և սկըոց 'Եկապօլիսին մէջը քարոզել՝ ինչ որ  
Յիսուս իրեն ըրաւ , և ամէնն ալ կըզարմանային :

**Խ**իստ զարմանալի պատմութիւն մըն է ասի-  
կայ , որուն մէջը քանի մը բաներ կան որ չենք  
կրնար շատ աղէկ հասկընալ . այսու ամենայնիւ շատ  
բան կըսորվինք ասկէ . մանաւանդ թէ օգտակար  
պիտի ըլլայ մտածելը՝ թէ մեր մեծ թշնամին սա-  
տանան , ինչ կերպով կըջանայ որ հոգևորական  
դերութեան մէջ պահէ մեր հոգիները :

Ահա քանի մը օրինակներով պիտի բացատ-  
րեմք ըսածս :

1. Տե՛ս՝ ինչպէս երկիրալի դերութիւն մըն է  
Արքեպուստիւնը : Արքեպոզը՝ անշուշտ սատանային  
իշխանութեանը յանձներ է զինքը : Արքեպոզները՝  
կարծես թէ շատ սատանաներ ունին իրենց փորը .  
ինչու որ անոնք շատ անգամ տեսակ մը կատարու-  
թեան մէջ կիյնան , որ ատեն կըհայհոյեն , կուի-  
կ'ընեն կըծեծկուին , և պատրաստ են դործելու ա-  
մենագարշելի մեղքեր , որոնց կըզրգուին ան  
վայրկենին մէջը : Թէ որ ըսես անոնց թէ ձեր  
ընտանիքը անօթութենէ կըմեռնին , կամ թէ ա-  
նոնց հոգիները կըկորսուին , անշուշտ պիտի հայ-  
հոյեն քեզի քու երեսիդ : Անոնք չեն՝ ուզեր տես-

նել սուրբ Վիրքը կամ Եկեղեցի մը : Այսպէս շատ անգամ գիշերները ու ցորեկները կ'անցընեն խմելով ու խելքերնին կորսընցնելով , անանկ որ կարծես թէ կընմանին անոնք ան մարդուն որ Ագէոն մը դեերէ կըտանջուէր . ու մէկը չկրնար յաղթել անոնց :

2. Ահա ուրիշ օրինակ մըն ալ : Կան մարդիկ որ զիրենք բոլորովին մեղսալից մարմնական ցանկութիւններու կուտան , ինչպէս որ առաքեալը կըսէ . “Ամէն կերպ պղծութիւն գործելու՝ ազահութիւնով” . Եփե. . ք, 19 : Այնչև անգամ իրենց թշուառ ապրուստը՝ անօրէնութեան՝ վարձքով կը շահին : Ինչ սոսկալի իշխանութիւն ունի սատանան՝ անոնց վրայ . որպիսի կատաղութեամբ մեղանչական կիրքերը կըսաստկանան անոնց ներսի դին . կարծես թէ իրենց համար փրկութեան ճամբայ մը չկայ : Իայց նաև խիստ ողորմելի ու երեսի վրայ մնացածներուն , ինչպէս և շատ յամառեալ արբեցողներուն ալ տակաւին ողորմութիւն կայ : Յիսուս ինքզինքը կըմատուցանէ իբրև Ամենակարող Փրկիչ , և կարող է ըսել անոնց սաստիկ կիրքերուն , “Պիղծ դէ ելի՛ր առ մարդէն” :

3. Աւրիշ օրինակ մըն ալ տանք : Աշխարհիս ինչքերը և հեշտութիւնները շղթաներու պէս չեն , որոնցմով սատանան մարդուս սիրտը կըկապէ : Բանզի կայ Անձնասիրութեան դէ , Հպարտութեան դէ , Անհազանդութեան դէ , Իզլախոհու-

Թեան դև , Խարէութեան դև , ու՛ Նախանձու դև :  
 Եսոնք ամէնը փոփոխակի կըթագաւորեն անզեղջ  
 մարդոց սրտերուն մէջը , թէ հարստութիւն շահե-  
 լու ատենը , և թէ զանիկայ շահելէն ետև ալ :  
 Մեր Փրկիչը ճշմարիտ կըսէ . թէ՛ « Դ՞նչպէս դժուար  
 է անոնց որ հարստութիւն ունին՝ Եստուծոյ թա-  
 գաւորութիւնը մտնալ . » Մարկ . Ժ , 23 :

4. Ե՛հա իմացուցի . քեզի աս աշխարհիս աստուծոյ  
 կարողութիւնը , հարուստ և երջանիկ՝ բայց ան-  
 զեղջ մարդոցը վրայ : Հիմա դիպուած մըն ալ  
 պիտի յիշեմ հոս , որ շատ անգամ կըպատահի  
 աղքատ ամբարիշտներուն : Երդեօք անոնց միտքը  
 չգա՞ր երբեմն իրենց նեղութիւն տուող խորհուրդ-  
 ներ Եստուծոյ վրայով : Երդեօք աս ահարկու խոր-  
 հուրդները տանջանք տուող գևերու Նեգէոնի մը  
 պէս չե՞ն անոնց ներսի դին : Փոխանակ՝ Յիսուսի  
 դիմելու որ թողութիւն և շնորհք և մխիթարու-  
 թիւն ընդունին , կ'ապրին անոնք իրենց Ստեղծողը  
 մոռնալով . և թէ որ մտքերնին բերեն զանիկայ  
 սաստիկ կըբարկանան անոր դէմ , անգութ տէր մը  
 համարելով զանիկայ : Քանզի Եստուծոյ դէմ  
 բարկութեան դև կայ , Տհաճութեան դև և յու-  
 սահատ Ենհոգութեան դև : Եսոնք ամէնը՝ աղքատ  
 ամբարիշտներուն սրտին մէջը աշխատելու վրայ են :  
 Եսիկայ շատ ցաւալի բան մըն է . վասն զի Յի-  
 սուս իրնայ զանոնք երջանիկ ընել , ու ի՞նչ էնել  
 թէ որ հաւատքով իրեն դիմեն :

Տեսնենք հիմա թէ ի՞նչ կերպով Յիսուս բնա-  
ջինջ կ'ընէ սատանային գործքերը: Անիկայ պար-  
զապէս կը հրամայէ չար Ոգիին մէկ խօսքով մը .  
“Աչի՛ր”: Աս խօսքէն դեերը կը դողան և կը հնա-  
զանդին . և ասանկով՝ Յիսուս կը խորտակէ մեղքին  
զօրութիւնը: Ուստի ո՛վ մեղաւոր, Յիսուսի դի-  
մէ, և ըսէ՛ անոր . “Աս չեմ՝ կընար ինքիրմէս  
յաղթել աս մեղանչական կիրքերուն և ցանկու-  
թիւններուն”, ո՛հ, “(Թող քու Ամենակարող Հո-  
գիդ նոր սիրտ մը ստեղծէ իմ մէջս”): Անշուշտ Յի-  
սուս պիտի լսէ քեզի, և պիտի փրկէ քեզ, թէ  
որ դուն անդադար աղաչես անոր:

Արբ որ դուն կը զգաս Յիսուսի շնորհքը՝ որ քեզ  
կ'աղատէ մեղքէն, անատենը գնա՛ ու ըսէ՛ ուրիշ-  
ներուն . “Ո՛րչափ մեծ բաներ ըրաւ Տէրը քեզի  
համար, և զթութիւն ունեցաւ քու վրադ”: Արբ  
որ զգաստանան անոնք որ խելքերնին իրենց կիր-  
քերուն տուած են, խաղաղութիւն կը վայելեն և  
բարեգործութիւն՝ կ'ընեն, անատենը մեծ՝ քաջալե-  
րութիւն կուտան ուրիշներուն՝ որ իրենց փրկու-  
թեանը համար հաւատան նոյն ինքն բարեգութ-  
Փրկչին: Սիրելի՛ բարեկամ, թէ որ դուն կը սի-  
րես աս փառաւորեալ Փրկիչը, անշուշտ պիտի  
փառաւորես զանիկայ, և ուրիշներն ալ պիտի  
հրաւիրես որ իրեն գան:

Իսոյց ո՛հ, որչափ անմիտ էին ան Վերգեսա-  
ցիները, քանզի երկու հազար խողերուն կորստեան

մնասը կրկրեն , ու անոր համար կ'աղաչեն Յիսուսի որ իրենց երկիրէն երթայ : Ի՞նչ յարմար նկարագրութիւն մըն է ասիկայ աշխարհասէր մըտքին : Ըն Գերգեսացիները չուրախացան իրենց տառապեալ ընկերին բժշկութեանը վրայ , հապա միայն իրենց ստացուածքը կը հոգային : Ըսանկ ալ անհաւատ մարդիկները կ'ուզեն վտանգի մէջ դնել բովանդակ ազգի մը փրկութիւնը , քան թէ ըստակ կորսընցընել . թէև հոգիի՛ մը փրկութիւնը՝ բոլոր աշխարհը շահելէն աւելի կ'արժէ :

### ԵՂՕԹՎ

Ո՛վ ամենակարող Ըստուած՝ որ քու օրհնեալ Որդիդ յայտնուեցաւ որ սատանային գործքը քակէ , կ'աղաչենք Վեզի փրկէ մեզ մեղքէն ու բարկութենէն Ընոր միջնորդութեամբը : Արևոստովանինք քու առջևդ թէ մենք ալ երկար ատեն գերի եղանք սատանային կամացը . այժ շատ անգամ այնպէս կապուեցանք մեր մեղքերուն կապերովը , որ չգիտցանք ինչպէս քակել ու աղատիլ անոնցմէ : Թո՛ղ քու բարի կամքդ ազատէ մեզ , ճրիապէս թողութիւն շնորհէ մեր անցած մեղքերուն , մեր Խաչեալ Փրկչին արժանաւորութեամբը : Վու հոգիիդ պսրգևը շնորհէ մեզի՛ որ ապրատամբ մեղաւորներ ենք , ու մեր հոգիներուն ամէն խորհուրդը՝ քու կամացդ հնազանդեցուր :

Լ՛մէն անմարտը խորհուրդը՝ ամէն հպարտ մտա-  
 ծութիւնը և աշխարհիս բոլոր մեղսալից կիրքերը՝  
 հեռացուր մեր սրտերէն: Տուր մեզի որ քու առ-  
 ջևըդ կենանք՝ հանդարտ և ուղիղ մտքով: Այս և  
 բաց մեր բերանը որ խօսինք ուրիշներուն ան փր-  
 կահան սիրոյն վրայով՝ որ յայտնուեցաւ մեզի քու  
 Որդւոյդ Յիսուս Քրիստոսի մեր Տէրօջը՝ ձեռքովը,  
 Լ՛մէն:

Գ Լ Ո Ւ Խ Գ:

ԵՆ ՀԵՆ Գ Ի Ս Տ Ի ՂՆՄՏԵՆՎ:

Մարի . Օ . 14—29:

Ու Հերովդէս թագաւորը լսեց, (ինչու որ անոր անունը  
 յայտնի եղաւ) և կըսէր թէ՛ Յօհաննէս Մկրտիչը մեռելներէն  
 յարութիւն առեր է, ու անոր համար հրաշքներ կըլլանի որ  
 անով:

Ուրիշները կըսէին՝ թէ Եղիան է, և ուրիշները՝ թէ Մարգա-  
 րէ մը, կամ մարդարէներուն մէկին պէս:

Երբոր Հերովդէս լսեց՝ ըսաւ, Ասիկայ Յօհաննէսն է՝ որուն  
 գլուխը ես կտրեցի, մեռելներէն յարութիւն առեր է:

Ինչու որ Հերովդէս ինքը խրկեց Յօհաննէսը բռնեց ու կապեց  
 անիկայ՝ և դրաւ բանտը Հերովդիային համար իր եղբորը Քի-  
 լիպպոսին կնոջը. ինչու որ ինքը իրէն կին ըրաւ անիկայ:

Որովհետեւ Յօհաննէս Հերովդէսին կըսէր, թէ՛ Քեզի օրինա-  
 ւոր չէ՛ քու եղբորդ կնիկը աւնենալ:

Եւ Հերովդէս ռի ունէր անոր դէմ, ու կուզէր անիկայ մեռ-  
 ցունել, և չէր կրնար:

Ինչու որ Հերովդէս կրօնականար Յօհաննէսէն , զիտնալով թէ անիկայ արդար և սուրբ մարդ մըն է . և անոր կըստպասէր . ու շատ բան անկէց լսած՝ կընէր , և անուշութիւնով իրեն մտիկ կընէր :

Երբոր զիպուկ օր մը եղաւ՝ որ Հերովդէս՝ իր ծնած օրվան ընթրիքը կուտար իրեն իշխաններուն և հազարապետներուն՝ ու Գալիլեացոց մեծամեծներուն .

Եւ երբոր Հերովդիային աղջիկը մտաւ՝ ու խաղաց , հաճելի եղաւ Հերովդէսին՝ և սեղան նստողներուն . թագաւորը ըսաւ աղջկանը , Ինդրէ՛ ինձմէ ինչ որ կուզես , ու պիտի տամ քեզի :

Եւ շատ անգամ երգում՝ ըրաւ անոր , թէ՛ Ինչ որ դուն ինձմէ խնդրես՝ պիտի տամ քեզի , մինչև թագաւորութեանս կէսը :

Անիկայ ելաւ իր մօրը ըսաւ , թէ՛ Ինչ ուզեմ . ու անիկայ ըսաւ , Յօհաննէս Ակրտիչին զլուխը :

Եւ ինքը շուտ մը արտորալով թագաւորին քով մտաւ , ու ըսաւ . Կուզեմ որ հիմա շուտ մը սկուտեղի մը վրայ Յօհաննէս Ակրտիչին զլուխը տաս ինձի :

Եւ թագաւորը խիտ տրտեցաւ . բայց երգումներուն համար՝ ու սեղան նստողներուն համար չուզեց որ արհամարհէ անիկայ :

Եւ թագաւորը շուտ մը դահիճ խրիկեց՝ հրաման ըրաւ անոր զլուխը բերելու . ու ան դնաց բանտին մէջ զխտեց անիկայ .

Եւ սկուտեղով մը բերաւ անոր զլուխը՝ ու տուաւ աղջկանը , և աղջիկը տարաւ իր մօրը տուաւ :

Երբոր իր աշակերտները լսեցին , իկան մարմինը վերցուցին՝ և գերեզման դրին :

**Գ**էշ դրացի մը անհանգիստ կ'ընէ մարդը . բայց յանցաւոր խղճմտանքը՝ ալ աւելի՝ անհանգըստութիւն կուտայ . վասն զի անիկայ մարդուն ներսի դէմ կըրնակի . ու անոր վրայ կըմնայ շատ ծանր բեռի մը պէս : Յանցաւոր խղճմտանք ունեցողը՝ թէ թագաւոր ըլլայ թէ գեղջուկ , երբէք չկրնար երջանիկ ըլլալու , մինչև որ իր սիրտը՝ Յիսուսի քաւիչ արիւնովը չսրսկուի , ու Աստուծոյ Սուրբ Հօգիովը չնորոգուի :

Հերովդէս թագաւորը՝ յանցաւոր խղճմտանքով  
 մը բեռնաւորած էր . անիկայ շնութիւն գործեր  
 էր իր եղբօրը կնիկանը հետ . և ուրիշ ամէն մե-  
 ղաւորներուն պէս՝ անօրէնութիւն անօրէնութեան  
 վրայ աւելցուցեր էր : Արջապէս անիկայ սպան-  
 նեց սուրբ Յօհաննէս Սկրտիչը . ու քիչ մը ետ-  
 քը՝ երբոր լսեց Յիսուսի հրաշքներուն վրայով ,  
 շուտ մը իր սիրտը կոտրեցաւ , և ստիպուեցաւ ը-  
 սել՝ թէ անիկայ Յօհաննէս Սկրտիչը պիտի ըլ-  
 լայ մեռելներէն յարութիւն առած : Ընշուշտ  
 մեղքը ասանկ կ'ընէ , թէ շուտ և թէ ուշ շփո-  
 թութեան մէջ կրճգէ ամէն ամբարիշտ մարդը :  
 «Վիտցէք որ՝ ձեր մեղքը ձեզ պիտի գտնայ» :  
 Թոմոս ԼԷ , 23 :

Գուցէ դուք ձեզ կըմտիթարէք , մտածելով՝  
 թէ դուք չունիք ասանկ սոսկալի մեղքեր , որ ա-  
 նոնք ձեզ յանդիմանեն Հերովդէսին պէս : Ըր-  
 դարև մեծ շնորհք մըն է անագորուն յանցանքնե-  
 րէն ազատ մնալը . բայց մտածեցէք քիչ մը , և  
 միտքերնիդ բերէք որ Ըստուծոյ օրէնքը հոգեւոր է :  
 Միտքերնիդ բերէք Յիսուսի խօսքերը , «Բայց ես  
 ձեզի կըսեմ , թէ՛ Ո՛վ որ կնիկ մարդու կընայի  
 անոր ցանկանալու համար , անիկայ իրեն սրտին մէջն  
 ալ շնութիւն ըրաւ անոր հետ» : Այլ դարձեալ  
 գրուած է , «Ո՛վ որ իր եղբայրը կ'ատէ՛ մարդաս-  
 պան է» : Կրնա՞ք դուք աս խօսքերը լսելէն ետև  
 ձեռքերնիդ սրտերնուդ վրայ դնել և ըսել , «Աս



յանցաւոր չեմ” : Արնաք՝ դուք՝ միտքերնիդ չբերել զանազան ատենները՝ որ պատրաստ էիք ան ամենապիղծ մեղքերը գործելու , [Թէ որ համարձակութիւն ունենայիք : Ձեր սիրտը կը փափագէր , մանաւանդ [Թէ բորբոքեալ էր որ և իցէ մեղքի մը :

Աւ չկան անսակ ատեններ որ ձեր մեծ գէշութեանը խորհուրդը ձեր խղճմտանացը վրայ կը ծանրանայ : Անշուտեան ժամանակները՝ մեր մեղքերը մտքերնիս կը բերեն ու զգալ կուտան [Թէ որչափ ողորմելի սխալի ըլլայինք առանց Փրկիչի մը : Արբեմն մէկ մասնաւոր տեղի մը տեսութիւնը մեր խղճմտանքը կ'արթնցնէ՝ ու կը ստիպէ մեզ ազազակելու , “ Կ'ս' ով , Կայր , կ'ս էր որ ես մեղայ յերկինս և քու առջևդ ” : Արիչ անգամ ալ՝ մասնաւոր անձի մը տեսութիւնը կը շարժէ մեզ , և մտքերնիս կը բերենք [Թէ մեղանչեր ենք՝ անոր կամ իր բարեկամին ընկերութեամբը : Ամ գուցէ կը յիշէք [Թէ այս ինչ օր՝ տարի մը առաջ , կամ քանի մը տարի առաջ ինչպէս մեզաց մէջ ինկար : Աս ցաւալի մտածմունքները կրնան հառաչանք մը հանել մեր սրտերուն խորունկէն , և ամբողջնել մեզ նաև՝ ի ծածուկ , երբոր մենք մեր աչքերը առ Աստուած կը վերցնենք :

Բայց բեռնաւորեալ խղճմտանքը կրնայ տեղ մը խաղաղութիւն գտնալ : Այո՛ , օրհնեալ է Աստուած որ Աւետարանը տուեր է ճիշդ աս բանիս

Համար : Հիսուս եկաւ մեղքը վերցընելու Համար  
իր պատարագովը : Անոր միջնորդութեամբը մեկք  
կրնանք Աստուծոյ մօտենալ ճշմարիտ սրտով , լե-  
ցուն Հաւատքով , և մեր սրտերը չար խիղճերէն  
լուանալով (Եբր . Ժ . 22) : Խիստ մեծ մեղաւոր-  
ները անգամ ասանկ կը հրաւիրուին . « Այլէք խօ-  
սինք մեկզմէկու Հետ կըսէ Տէրը . ու թէ որ ձեր  
մեղքերը ծիրանեգոյն են , ձիւնի պէս պիտի ճեր-  
մըկնան . ու թէ որ որդան կարմիրի պէս են՝ ա-  
սրբ պիտի դառնան » Ասայ . Թ , 18 :

Արեմն ինչո՞ւ Համար խղճմտանքը պիտի ուզէ  
արգիլել քեզ որ Վրիստոսի չդիմես : Վու մեղքդ՝  
ուղղակի անոր կըխրկէ քեզ , որ քու խղճմտանքդ  
սրսկուի անոր քաւիչ արիւնովը :

Բայց գուցէ դուն տակաւին մեղքը կըսիրես :  
Չե՞ս ուղեր ուրեմն հրաժարիլ քու մեղսալից հեշ-  
տութիւններէդ . թէ որ այսպէս է , իրաւ որ սոս-  
կալի է քու վիճակդ : Այսէ շերովդէսին . անի-  
կայ մեղքին հեշտութիւնները քիչ մը ատեն վա-  
յելեց . ու ջանաց որ ցրուէ իր տխրագին մտած-  
մունքները կոչունքով և կաքաւով . ու գեշին՝ գեշը  
ըբաւ : Բայց իր խղճմտանքը դժօխքի մը պէս էր  
իր ներսիդին . — Մէկ որդի մը պէս՝ որ չմեռնիր .  
մէկ կրակի մը պէս որ չմարիր : Ա՛հ , դարձի՛ր ,  
բանի որ ատենը անցած չէ , ու մէկդի ձգէ մեղ-  
քը . նոր սիրտ մը փնտրուէ , Վրիստոսի ապա-  
ւինէ — միայն Վրիստոսի :

Երջանիկ է ան մարդը՝ որ մաքուր խղճմտանք մը ունի : Այսէ Յօհաննէս Սկրտիչին , անիկայ էր երջանիկ մարդը՝ չէ թէ Հերովդէս : Թէպէտև յանկարծ և անողորմաբար անոր գլուխը կտրուեցաւ , սակայն անիկայ պարտաւոր էր Ռոմանելո : Անիկայ ճանչցաւ իր վարդապետը Յիսուս Վըրիստոս , սիրեց ու ծառայեց անոր , և վասն այսորիկ կրփափագէր որ հրեշտակները անմիջապէս տանին զինքը Աբրահամին գողը : — Ո՛րք ըլլալ կ'ուզես դո՛ւն . Հերովդէսը՝ թէ Յօհաննէս Սկրտիչը : Աստուած շնորհք տայ քեզի որ աղէկ ընտրութիւն ընես : Ո՛հ , Յիսուսի դիմէ որ աղատէ քեզ մեղքին գերութենէն , ու տայ քեզի թողութիւն , խաղաղութիւն ու սրբութեան Հոգի : Թո՛ղ Անիկայ մարդէ քու խղճմտանքդ մեռած գործքերէն , կենդանի Աստուծոյ ծառայելու համար :

### ԵՂՕԹԻՔ

Տէր Աստուած՝ ամենասուրբ արդար և ճշմարիտ , որչափ պատճառներ ունինք մենք մեղաւոր արարածքս , քու աստուածային վեհափառութեանդ առջևը դողալու : Դուն քննեցիր ու ճանչցար մեզ . Դուն գիտես մեր նստելը ու ելլալը . Դուն մեր անկողինին քովն ես ու մեր շաւիղին վրայ , ու կրտեսնես մեր ամէն ճամբաները : Մութը Վեղի խաւար չէ , հապա գիշերը ցորեկի

պէս պայծառ է : Այ՛ս Վու՛ն կըճանչնաս մեր սրտերուն բոլոր գաղտնիքը :

Ամենասուրբդ Աստուած , դուն կարօտ չես մեր խղճմտանքին վկայութեանը . վասն զի՛ Վու՛ն ինքնդ կրնաս վկայել մեզի դէմ , մեր անցած մեղքերուն համար , քան որչափ մենք կրնանք մտքերնիս բերել : Սակայն դուն մեր ներսի դին դըրիր մեր բուն խղճմտանքին վկայութիւնը , որպէս զի իւրաքանչիւր բերան գոցուի , ու բոլոր աշխարհ յանցաւոր ըլլայ Աստուծոյ առջևը :

Ո՛վ Տէր , մեր խղճմտանքը մեզի դէմ կը վկայէ , ու մեզ կը դատապարտէ : Մենք չենք կրնար արդարացընել կամ անպարտ կացուցանել ինքըզինքնիս : Մեր անօրէնութիւնները մեր գլուխէն բարձր եղան , ու մեր մեղքերը մինչև երկինքը հասան :

Ո՛հ , քանի՛ անգամ ալ ուրիշներուն մեղացը պատճառ եղած ենք , որոնց մէկ քանին ալ արդէն հրաժարուելով աս կեանքէն՝ քու ատեանդ ելած են : Մեր ամէն մէկը ձեռքերնիս բերաննուս վրայ պիտի դնենք ու ըսենք . Ա՛հա ես անարգ մարդ մըն եմ , ես ինքզինքէս կը դատարչիմ , և կը զղջամ հողով և մոխիրով :

Վայց ո՛վ Տէր՛ , մարդասէր և բազում ողորմ , մի՛ ըներ մեզի , կ'աղաչենք , մեր մեղքերուն համեմատ . հապա՛ մեր Փրկչին Քրիստոսի ձեռքովը , քու առատ ողորմութեանդ համեմատ : Ողորմէ՛

մեզի Մնոր համար՝ որ թողութիւն և խաղաղութիւն խօսեցաւ մեռնող աւազակին , անոր կենացը վերջին կէտը : Նարկութենէ փրկէ մեզ . մի՛ թողուր որ ընկղմինք ան տանջանաց տեղը՝ որուն որդը չմեռնիր ու կրակը չմարիր : Ա՛յլ Տէր կենաց և խաղաղութեան . արդարև շնորհակալ ենք Քեզմէ , որ աս վայրկեանիս դժոխքին բանտին մէջը չձգեցիր մեզ յաւիտեանս յաւիտենից առանց յոյսի մնալու : ( ) Գնէ մեզի որ հասկընանք քու անճառելի սէրդ , որով պինտ անարգը կրնայ մաքրուիլ , սրբուիլ և արդարանալ Տէր Յիսուսի անունովը , և մեր Մատուծոյն Հոգիովը : Ա՛յլ Տէր քեզի կ'աղաղակենք . մեր մեղքին և թշուառութեանը անդունդէն , մի՛ մերժեր մեր աղաչանքը . հապա լուսաւորէ մեր հոգիները քու հաշտեցուցիչ երեսիդ լուսովը՝ Յիսուսի սիրոյն համար , որ կարող է բոլորովին փրկել ամէն անոնք որ Մնով Մատուծոյ կուգան : Ա՛յլ Մատուծ՝ իս փրկելու , ո՛վ Տէր ինձի օգնելու արտօրա՛յ , Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբը . Ամէն :

## ԳՂՈՒԽ Ե՛ :

ՄԵՂԵՐԻՆ Ե՛ ԽԵՒԵԼՈՒԹԻՒՒՆԵՐ

Սոր՛ . թ . 42—47 :

Եւ թէ որ քու ձեռքդ քեզ կըզայթակղեցունէ՝ կտրէ՛ նետէ՛ քեզմէն . ինչու որ՝ աղէկ է քեզի պակասաւոր մտնալ յաւիտեանական կեանքը , քան թէ երկու ձեռք ունենալ՝ ու դեհեանը երթալ չիմարելու կրակին մէջ :

Ուր որ անոնց որդը չիմեանիր , և կրակը չիմարիր :

Եւ թէ որ քու ոտքդ քեզ կըզայթակղեցունէ՝ կտրէ՛ նետէ՛ անիկայ քեզմէն . աղէկ է քեզի կաղ մտնալ յաւիտեանական կեանքը , քան թէ երկու ոտք ունենալ՝ ու դեհեանը իյնալ չիմարելու կրակին մէջ :

Ուր որ անոնց որդը չիմեանիր , ու կրակը չիմարիր :

Եւ թէ որ քու աչքդ քեզ կըզայթակղեցունէ՝ դուրս հանէ անիկայ . աղէկ է քեզի մէկ աչքով Աստուծոյ թաղաւորութիւնը մտնալ , քան թէ երկու աչք ունենալ՝ ու դեհեանը իյնալ :

Ուր որ անոնց որդը չիմեանիր , և կրակը չիմարիր :

**ԱՍՏՈՒՆԾ՝** նախ արդար ստեղծեց մարդը և դրաւ դրախտին մէջ , ուր տեղ անիկայ սուրբ ու երջանիկ էր : Իսայց մեղքը շուտով աշխարհք , մտաւ , ու մեղքէն՝ մահը : Ասան որոյ մեր մտքին բոլոր կարողութիւնները , ու մեր մարմինին բոլոր անդամները՝ հակամիտութիւն մը ունին մեղքի : Են բաները՝ որ ինքնին անմեղ են , ու մինչև հարկաւոր եղած բաներն ալ շատ անգամ պատճառ կ'ըլլան որ մենք անօրէնութիւն գործենք : Եւքը

ձեռքը , ոտքը , ամէնն ալ մեղք գործելու կը հրապուրեն մեզ , ինչու որ բուն սիրտը ապականեալ է :

Սեր Տէրը՝ մասնաւորապէս հոս մտքերնիս կը ձգէ , թէ ամէնքս ալ անանկ մեղքեր ունինք որ ուրիշներէն՝ աւելի հաճելի է մեզի գործելը , և աւելի դժուար է անոնց յաղթելը : Ես յօժարութիւնները՝ փոփոխութիւն կ'ընդունին զանազան պարագաներու համեմատ , ինչպէս են մեր առաջին սովորութիւնները կամ մեր մասնաւոր կազմութիւնը : Արիտասարդութեան մէջ մարդիկ հասարակօրէն շատ կը փորձուին մարմնին ցանկութիւններովը : Այլական հասակին մէջ կը փորձուինք՝ ոչ միայն ցանկութիւններով , այլ և հպարտութեամբ , աշխարհասիրութեամբ ու ստակ շահելու անյագ փափագովը , որ ասոնք միշտ աւելնալու վրայ են : Մասնաւորապէս մենք ամէնքս կը փորձուինք հոգևոր ծուլութեամբ ու մարմնոյ հանգստութեան սիրովը : Պէտք է աս փորձութիւններուն դէմ կենալ , և բնաւ գութ կամ խնամք ունենալու չենք մեզի խիստ սիրելի եղած մեղքերուն : (Ի) Ե որ մենք ամէն բաները մէկ դի ձգենք , բայց մէկ մեղք մը պահենք մեզի , ան մէկը բաւական է մեր կորստեանը պատճառ ըլլալու :

Անձնուրացութիւնն է Վրիստոսի օրէնքը : Այր որ դուն մտքդ կը բերես նէ ասիկայ՝ տրամութեամբ կը մտածես թէ որչափ ծանր բան է փրկութիւնը ձեռք բերելը : Ահրէ ինձի , սիրելի բարեկամ ,

որ աս նիւթիս վրայով քանի մը խոր տտամ քեզի :

1. Ըմէն բանէն առաջ՝ երկրպագութիւն ըրէ Լստուծոյ քեզի ըրած համբերութեանը , անցած օրերուն և տարիներուն մէջ : Ստածէ թէ որչափ շատ կերպերով մեղանչեցիր : Ստածէ որ եթէ Լստուած՝ այս ինչ կամ այն ինչ ստենը քու հոգիդ առներ , անշուշտ դժոխքին մէջը պիտի իյնայիր , “ուր տեղի որդը չմեռնիր , ու կրակը չմարիր” : Ո՞վ զարմանալի մարդասիրութեան և երկայնամտութեանն Լստուծոյ , որ պահեց քեզ այսչափ ժամանակ և տակաւին կրպահէ :

2. Արկրորդ՝ մտածէ Քրիստոս Յիսուսի փրկագործութեան միջոցովը եղած անցած մեղքերուն թողութեանը վրայով : Այդէ ան աղբիւրը՝ որ բացուած է մեղաց և անմաքրութեան համար , Յիսուսի արիւնովը լուացուէ՛ և մաքրուէ :

3. Սեղաց դէմ՝ քու պատերազմիդ ատենը՝ միշտ միտքդ բեր , թէ դուն ինքնին կարողութիւն չունիս , ինքզինքիդ օգնելու : Յիսուս կ'ըսէ , “առանց ինձի բան մը չէք կրնար ընել” : Թէ որ բուն քու ուժովդ մարանչիս դուն , գիտցած ըլլաս որ մեղք մը պիտի գործես : Բայց թէ որ բոլորովին Սուրբ Հոգիին շնորհացը ապաւինիս , Լստուած պիտի օգնէ քեզի որ ամէն մեղքի դէմ կենաս ու հրաժարիս անոնցմէ : Եղթթը և արթնութիւնը Քրիստոսի մօտ պիտի պահէ քեզ : Ենիկայ պիտի առաջնորդէ ու օգնէ քեզի , իբրև



քու փրկութեանդ Օգորագլուխը , ու առաջ պիտի երթաս յաղթութիւն ընելով և յաղթելով (Յայտ. Դ. 2) :

4. Արբոր մեղքը կուգայ աշխարհիս հեշտութեանը խոստմունքներովը , իսկոյն երես դարձուր՝ մտիկ մ' ըներ անոր : Մի՛ խօսակցիր փորձութեանը հետ , և բոլոր սրտով ատէ զանիկայ : Մտածէ ան ահաւոր Գժո՛խք անունը : Մի՛տքդ բեր թէ ինչպէս Յիսուս իրեք անգամ կրկրկնէ աս խօսքը — «Վհեանք լյնալ չիմարելու կրակին մէջ» : Աչքիդ առջևը բեր կենաց վերջին ժամուն մտածութիւնները : Պիտի չփափաքիս անատներ՝ որ աս բանիս մէջ խղճմտանքդ խայթոց մը չունենայ : Հիմախօսուքու անձնասիրութիւնդ՝ կրնայ տանջանք տալ քեզի անտարէնը . հիմակուան անձնուրացութիւնն է վերջը խաղաղութիւն ունենալու ճամբան :

5. Գարձեալ՝ յաճախ մտածէ հանդերձեալ փառքին վրայով , մինչև որ քու հոգիդ լցուի յաւիտենական կեանքը մտնելու խորհուրդովը : Անամօթ մեղաւորը կ'ըսէ , «Տուր ինձի իմ լեցուն բաժակս հիմա աս աշխարհիս մէջը , կարճ կեանք մը , բայց ուրախ կեանք մը» . Հաւատացեալը կ'ըսէ , «Աս կրնամ իմ կեանքս անցունել առանց աս մեղսուից թոյլտուութիւնները խնդրելու . ես իմ լեցուն ուրախութիւնս երկինքին մէջը կըսպասեմ» : Արչափ տարբերութիւն կայ ասոնց երկուքին ընաւորութեանը մէջ :

Արդեօք դժուարին մէջը մտիթարութիւն պիտի ունենա՞նք երբ որ մտածենք թէ աս աշխարհիս մէջը կատարեալ ուրախութիւն վայելած ենք : Անշուշտ ոչ . և աս մտածմունքը՝ դատապարտեալ հոգիին տանջանքները ալ աւելի պիտի սասակացընէ : Բայց ո՞հ , ի՞նչ ուրախութիւն պիտի ըլլայ մեզի որ մինչև վերջը մեղքին դէմ կենալէն ետև , երբօր մեր Վրկիչը ձեռքերնուս կը բռնէ ու մեզի կ'ըսէ . « Ազնիւ՛ ծառայ՛ » — երբօր հրեշտակները առջևնիս կ'ելլան ու երկինքին դռները բանալով՝ կ'ըսեն . « Եբօ մտիր , ներս մտիր , ո՞վ Տէրոջը օրհնածը : Հոն՝ ալ փորձութիւններ պիտի չունենանք . ոչ մեղսալից օրինակներ , և ոչ բնական ապականութիւններ . հապա ամէն բան պայծառ , մաքուր և յստակ բիւրեղի պէս : Հոն՝ ալ պիտի չզգանք մարմինին ծանրութիւնը , ոչ տկարութիւն և ոչ աշխատութիւն : Հոն տեղը՝ յաւիտեան Հիսուսի հետ պիտի բնակինք :

## ԵՂ ՕԹՎ

Ո՞վ Տէր Աստուած մեր , որ քու մարդասիրութեամբդ՝ Հիսուս Վրիստոսի ձեռքովը մեր ամէն մեղքերուն թողութիւն շնորհեցիր , նաև սրբութեան կանչեցիր մեզ . վերցուր մեզ՝ խոնարհութեամբ կ'աղաչենք քեզի , մեզաց մահուանէ արդարութեան կեանքին : Ինչպէս որ մենք մեր ան-

դամները ծառայ ըրինք պղծութիւններու և անօրէնութեան , այսպէս հիմա կարողացուր մեզ որ մեր անդամները ծառայ ընենք արգարութեան և սրբութեան : Ա՛յ սուրբ և սրտերը քննող Մատուած , մեր հոգիներուն ամէն մէկ կիրքը և ցանկութիւնը զսպէքու օրհնեալ կամքովդ : Այի թողուր որ ծածուկ կուռք մը մեր սրտերուն մէջը կանգնենք : Շնորհք աուր մեզի որ մէկ զի ձգենք ամէն բեռը և մեղքը որ անանկ դիւրութեամբ կը պաշարէ մեզ ( Ե՛ջր ժբ , 1 ) , նաև ինքզինքնիս ուրանանք օրինաւոր բաներու մէջ ա՛յ թէ որ անոնք արգելք մըն են մեր շինութեանը : Ինչպէս որ մենք ինքզինքնիս քեզի նուիրած ենք՝ ասանկ ալ օգնէ մեզի որ յայտնապէս քու օրէնքիդ հնազանդինք , ու կատարեալ սրտով քու առջևդ քայլենք : Աղորմէ՛ մեր անթիւ տկարութիւններուն , ու մարտէ՛ մեզ մեր մեղքերէն : Այս դու՛ ո՞վ օրհնեալ Հօգի , բոլորովին սրբէ մեզ , որ մեր միտքը , հոգին՝ ու մարմինը պահպանուի ու ամբիժ և անարատ գտնուինք մեր Տէրօջը Յիսուս Քրիստոսի գալուն .

Ա՛մէն :

## ԳԼՈՒԽ Օ :

ԻՐԻՍՏՈՍԻ ՓԵՆՐՏԻԵՐԸ ՕՐ ՀՆԵԼԸ :

Սարկ . Ժ . 13—16 :

Եւ մանր տղաք բերին իրեն , որ ձեռք դնէ անոնց մայ \*  
բայց աշակերտները կը շնչեն ին բերողները :

Յիսուս երբոր տեսաւ , սրդողելով շէխեց անոնք՝ ու ըսաւ ,  
Թող տըւէք ասո մանր տղոցը որ ինձի դան , և մի՛ արգիլէք  
ատոնք . ինչու որ՝ ատանկներուն է Աստուծոյ թագաւորութիւնը :

Ղշմարիտ կըսեմ ձեզի , Ո՛վ որ Աստուծոյ թագաւորութիւնը  
պզտիկ տղի մը պէս չընդունիր , անիկայ չիպիտի մտնայ հոն :

Եւ անոնք գիրկը առաւ , վրանին ձեռք դրաւ՝ ու օրհնեց աս-  
նոնք :

**Ո**ւր տեղ որ մանր տղաք կան՝ պէտք է կար-  
գալ անոնց Աւետարանին աս գեղեցիկ պատմու-  
թիւնը : Մտիկ ըրէք իմ սիրելի տղաքս՝ որ՝ ը-  
սեմ ձեզի , թէ Յիսուս որչափ կաթողին սիրով  
կըսիրէ ձեզ : Անիկայ իր ձեռքը կ'երկընցնէ որ  
ընդունի և օրհնէ ձեզ :

Որովհետեւ Յիսուս միշտ ասանկ մարդասիրու-  
թիւն կը ցուցնէր ամէնուն , զարմանալի բան մը  
պիտի չըլլայ ձեզի , որ հայրերը ու մայրերը կը  
փափաքէին իրենց զաւկները Անոր տանելու : Ո՛ր-  
չափ տմարդութիւն և գրեթէ անգթութիւն ըրին  
անոր աշակերտները՝ երբոր վաւրնտեցին զանոնք :

Արչափ քիչ տեղեկութիւն ունէին անոնք անասնոնք՝ Քրիստոսի սիրոյն վրայով :

Գուցէ անոնք կըխորհէին թէ ան տղաքը ձանձրութիւն տալու են Յիսուսի : Յիրաւի տղաքը ձանձրալի են երբեմն, երբոր անոնք առաջուց սորված չեն հնազանդութիւն ընելը՝ անշուշտ ձանձրութիւն կուտան մարդուն : Բայց Յիսուս կ'ուզէ որ իրեն բերեն տղաքը, թէև անոնք ձանձրացուցիչ ըլլան : Այո՛, որովհետեւ ձանձրութիւն տուող են անոնք, ասիկայ է բուն պատճառը՝ որուն համար անոնք Յիսուսի բերուելու են : Վանզի ասիկայ մէկ ճամբայ մը ունի որ կրնայ զանոնք վարժել, իր քաղցր կանոններովը և իր սիրելի վարքին օրինակովը :

Գուցէ աշակերտները խորհեցան, թէ՛ «Ան մանր տղաքը ինչ օգուտ պիտի տեսնեն Քրիստոսէ՛, — քանզի այնքան փոքր են անոնք : Չափահաս մարդիկը կրնան սորվիլ անկէ, բայց ի՞նչ օգուտ պիտի տեսնեն տղաքը, Քրիստոսի անոնց դպչելովը » : Այսպէս ան տղէտ աշակերտները կըհեռացընէին ծնողքները որ իրենց մանր ու սիրելի տղաքը Քրիստոսի կըբերէին :

Իմ սիրելի տղաքս՝ Քրիստոս կարող է մեծ աղէկութիւն ընել ձեզի : Արբոր Քրիստոս ձեռք դրաւ ու օրհնեց մանր տղաքը, անոր ըրածը ոչինչ բան մը չէր : Անիկայ ցուցուց մեզի, թէ ասիկայ է ստուգիւ՝ մանր տղաքը հաճեցնելու և զանոնք

վարժելու ճամբան : Մտածեցէք քիչ մը .— երբոր  
 դուք կրնասիք ձեր մօրը գիրկը , ու ձեզ կըզգուէ ,  
 չէք զգար որ անիկայ անշուշտ բարերար մըն է  
 ձեզի : Արբոր դուք ձեր հօրը քովը կըկայնիք և  
 անոր երեսը կընայիք , ու անիկայ կըլննդայ ու  
 կարևոր խրատ մը կուտայ ձեզի , չէք մտածէր թէ  
 ինչ խելացի ու բարեօիրտ է ան : Հիմա , Յիսուս  
 աւելի բարերար է , քան որչափ շատ բարերար  
 մայր մը , և աւելի խելացի՝ քան որչափ խիստ  
 խելացի հայր մը :

Անտարակոյս երբ որ անիկայ ան մանր տղաքը  
 իր գիրկը առաւ , և իր ձեռքը անոնց վրայ դրաւ  
 և օրհնեց , անոնք զգացին ու ըսին , «Մհ , որչափ  
 բարերար է աս Յիսուսը» :

Իայց մտածեցէք , սիրելի՛ տղայք , թէ ինչպէս  
 ան օրհնեալ բազումները ետքը խաչին վրայ տա-  
 րածուեցան , ու անատենը բւեռները ծակեցին  
 անոր ձեռքերը և անոր ոտքերը : Մտածեցէք թէ  
 անատենը որչափ սիրեց ձեզ , ու ձեր փրկութեանը  
 համար իր անգին արիւնը թափեց :

Սիթէ դուք ալ չէք կրնար Յիսուսի դիմել :  
 Այո՛ , անշուշտ կրնաք , ու անիկայ ձեր սրտերուն  
 պիտի դպչի օրհնելով ձեզ , թէ որ դուք աղօթք  
 ընէք Անոր : Բսէք ուրեմն . Մի վերկիչ իմ , սոր-  
 վըցուր ինձի որ սիրեմ Վեզ , սիրեմ աղէկ մար-  
 դը , աղէկ գրքերը և աղէկ ճամբաները : Օրհնէ  
 բոլոր աս տանս մէջ եղողները . քաղաքավար ու

սուրբ ըրէ մեզ , ու մեր ամէն մեղքերէն փրկէ  
մեզ , քու միջնորդութեամբդ՝ ոյլ Յիսուս որ մեր  
Փրկիչն ես :

Իմ սիրելի՛ տղաքս , աղօթք ընելու սէր ունե-  
ցէք : Աղօթքը անանկ բան մըն է որ Յիսուսի  
կրտանի մեզ . քանզի անիկայ կըսէ . “Աս կըսիրեմ  
զիս սիրողները , ու կանուխ փնտրուողները զիս կը  
գանան” Լուկ 17 :

Մէկը երկնից թագաւորութիւնը չմտներ , բայց  
եթէ անոնք որ խոնարհ են , գիւրանսաց և հնա-  
զանդ , որ Յիսուսի նման կ’ապրին աշխարհիս վրայ :  
Օտերը և երիտասարդը , ու մանր տղայքը անգամ ,  
պէտք է որ ամէնքն ալ սորվին աղօթք ընել , նոր  
սիրտ և ուղիղ հոգի ստանալու համար : Արանի թէ  
ամէն օր կարող ըլլայինք աւելի խոնարհ , աւելի  
սուրբ և աւելի յարմար ըլլալու երկնից համար :

Ինչ երջանիկ տղայք և ինչ երջանիկ ծնողք  
եղած պիտի ըլլան անոնք , ինչու որ Վրիստոս իր  
բազուկները երկնցուց աս մանր տղաքը գրկելու  
և իր ձեռքերը անոնց վրան դրաւ ու օրհնեց զա-  
նոնք : Լուկաս անիկայ ձեզ ալ օրհնէ , իմ  
սիրելի՛ տղաքս :

Ահա ես ալ աս կարճ՝ բայց շատ գեղեցիկ ա-  
ղօթքը կ’ընեմ ձեզի համար . — “Մեր Տէր Յի-  
սուս Վրիստոսի շնորհքը՝ ձեր հոգիին հետ ըլլայ” .

Ամէն :

## Ե Ղ Օ Թ Վ

Ո՛վ Տէր՝ կ'աղաչենք որ քու շնորհքդ և գթու-  
 թիւնդ անպակաս ըլլայ Տղոցը վրայէն: Կարող  
 ըրէ՞ մեզ որ զանոնք Քեզի բերենք միշտ՝ աղօթ-  
 քին միջոցովը, և օրհնէ մեր աշխատութիւնը՝ որով  
 կը վարժենք զանոնք քու՝ խօսքիդ գիտութեանը  
 մէջ: Եւ ճեցո՛ւր զանոնք քու առջևդ ճշմարտու-  
 թեան, սրբութեան, խոնարհութեան, խաղաղու-  
 թեան և սիրոյ մէջ: Թողու թի՛ւն տուր անոնց  
 ամէն մեղքերուն, ջնջէ անոնց ամէն անօրէնու-  
 թիւնները: Դի՛ր քու Հոգիդ անոնց ներսիդին՝  
 որ կարող ըլլան կանուխ ընտրել Քեզ իբրև ի-  
 րենց Տէրը: Պահէ զանոնք աշխարհիս որոգայթ-  
 ներէն, ամէն գէշ օրինակներէն և ապականեալ  
 ընկերներէն: Ու երբոր կ'աճին անոնք հասակաւ  
 աճեցո՛ւր նաև իմաստութեամբ, ու առ Եստուած  
 և առ մարդիկ սէր ունենալով: Եւ վերջապէս՝  
 ո՛վ Տէր, ընդունէ մեզ և ամէն մերիւնները, եր-  
 կինքը՝ քու օրհնեալ գերդաստանիդ՝ մէջ, մեր Տէ-  
 րոջը Յիսուս Քրիստոսի ձեռքով. Եւ մէն:



## ԳԼՈՒԽ Լ:

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵՆՈՒԵՆՆԵՐ ԵՎ ՏԵՓՆԵՍՏՆԵՐ:

### Մարտի, Երկ. 32—39:

Երկու անգամ՝ որուն անունը Գեթսեմանի էր, և ըստ աշակերտներուն. Հոս նստեցէք մինչև որ ես աղօթք ընեմ:

Եւ առաւ իր հետը Պետրոսը՝ ու Յակոբոսը՝ և Յոհաննէսը, ու սկըսեց տրտմիլ և հոգալ:

Ենատներ ըստ անոնց. Իմ անձս մտնելու շափ տրտում է. հոս կեցիք՝ և արթուն մնացէք:

Ու քիչ մը առաջ գնաց, իր երեսին վըայ գետինը ինկաւ՝ և աղօթք ըրաւ, որ եթէ կարելի է՝ ան ժամը իրմէ անցնի:

Եւ ըսաւ. Եբրայ՝ Հայր, ամէն բան քեզի հնարաւոր է, սո գաւաթը ինձմէ անցուր. բայց չէ թէ ինչպէս որ ես կուզեմ, հայա՛ ինչպէս որ դուն կրկամիս:

Ու եկաւ դտաւ անոնք՝ որ կրքնանային, և ըստ Պետրոսին. Սիմոն կրքնանա՛ս՝ չիկրցա՛ր ժամ մը արթուն կենալ:

Արթուն կեցիք՝ և աղօթք ըրէք, որ փորձուածեան մեջ չի մտնաք. հոգիս յօժար է, բայց մարմինս տկար:

Եւ նորէն գնաց աղօթք ըրաւ, ու նոյն խօսքերը ըսաւ:

**ՏԵՓՆԵՆ** մեր Յիսուս Վրիստոս՝ Օգտիկը իր աշակերտներուն հետ ուտելէն ետև, անոնց հետ Լըրուսաղէմէն դուրս ելաւ ու ձորին անդիի կողմը անցնելով՝ գնաց մէկ պարտեզ մը որ Գեթսեմանի կրկոչուէր: Հոն թողուց Յիսուս մէկալ աշակերտները, ու իր հետը առաւ Պետրոսը ու Յակոբոսը և Յոհաննէսը: Ետնք էին իր ըն-

կերները՝ լեռանը վրայ իր Այլակերպութեան ժամանակը : Անտենը՝ անոնք իրենց Տէրը բոլորովին փառաւորեալ տեսան . բայց Հիմա նեղութեան ու տաղնապի մէջ ընկած կրտսնեան զանիկայ : Յիսուս կրպատուիրէ անոնց որ կենան հոն ուր որ էին , ու հսկեն իրեն մօտ : Անտենը քիչ մը առաջ գնաց ան . ու երգոր մինակ մնաց , երեսի վրայ գետինը իյնալով՝ աղօթք ըրաւ :

Ասիկայ էր իր մահուան տապնապին ժամը . որովհետեւ Որդի Աստուծոյ և Որդի մարդոյ էր , Հիմա մեռնելու մօտենալով՝ բոլոր մարդկային ազգի մեղացը համար , սկսեց խօսովիլ ան սոսկալի բեռը աչքին առջևը բերելով , որն որ վերջընելու յանձն առեր էր : Ասիկայ էր միլիոնաւոր մարդոց անթիւ մեղքերուն բեռը . ասիկայ էր Աստուծոյ բարկութիւնը՝ Ազամայ և բոլոր իր սերունդին վրայ :

Տես ինչ կ'ըսէ Յիսուս իր աղօթքին մէջը , ան սարսափելի ժամուն համար :

'Ասխ' անիկայ յայտնապէս կըզգայ թէ Աստուծոյ անէծքը սոսկալի բան մըն է , ու մէկ դառն բաժակ մը կ'անուանէ զանիկայ : Քանզի ասիկայ էր Ամենակարողին Աստուծոյ բարկութեան բաժակը . անոր վրէժխնդրութիւնը՝ մեղքին դէմ :

Ուստի մեր Տէրը աղօթք կ'ընէ որ՝ եթէ կարելի է նէ ան ժամը իրմէն անցնի : Իսկայ միանգամայն կըհաստատէ՝ թէ հնարաւոր չէ : Իմացաւոր ասիկայ է Աստուծմէ սահմանուած մէկ հատիկ

Ճամբան , աշխարհիս փրկութեանը համար : Այսպէս հաճեցաւ Տէրը բեկանել զանիկայ ( Ասայ , ծի . 10 ) : Տուաւ անոր իր բարկութեան լեցուն բաժակը որ բոլորովին խրմէ մինչև մրուրը :

Յիսուս իմացաւ աս ամէնը , և ասոր համար խոնարհութեամբ յանձնառու եղաւ իր Հօրը սուրբ կամացը հնազանդելու : Վոխանակ ուրախութեանը որ կար իր առջևը , անիկայ կամաւ կրեց հոգին և մարմինն մահուան ժամանակը քաշած սաստիկ տազնապները :

Սիրելի՛ բարեկամ , արդեօք ասիկայ չցուցնենք մեզի մեղքին ինչ գէշ բան ըլլալը : Արբեմն մեղք գործելէն առաջ մենք մեզ կրնեղացրնենք , քաղցր և հաճոյական բան մը համարելով զանիկայ : Արբեմն՝ երբոր վերստին կրնայինք մեր մեղքերուն վրայ , կըջանանք մոռնալ կամ թեթեամտութեամբ բանի տեղ չենք դներ զանոնք , բայց ընդ հակառակն պէտք էր մեզի անանկ մտածել ամէն մէկ մեղքին վրայ , որ ամչնայինք ու շփոթութեան մէջ իյնայինք , հոգինիս սոսկար , ու սրտերնիս սաստիկ ցաւ մը զգար :

Յիսուս՝ երբ որ առաջուց խորհեցաւ իր սոսկալի չարչարանքներուն վրայով , արիւնի մեծ կաթիլներու պէս քրտինք թափեց , Եւս կրնամք ծաղը ընել կամ տակաւին ծիծաղել մեղքի մը վրայ , թէ բուն մեր մեղքին և թէ ուրիշներուն մեղացը վրայ : (Ի՞նչ որ մենք զգայինք ինչպէս որ Վրկիչը

զգաց իր մահուան տագնապին մէջը , անշուշտ կը ճանչնայինք թէ մէկ մեղսալից խորհուրդ մը անանկ բեռ՝ մըն է խղճմտանքին վրայ որ շատ ծանր է կրելու : Մենք Յիսուսի պիտի գիմենք մեր մեղքերուն թողութիւնը խնդրելով , և խոստովանելով թէ անոնց յիշատակութիւնը շատ ցաւալի է մեզի , ու անոնց ծանրութիւնը անտանելի :

Ասկէ զատ՝ տես հիմա ինչ ապահովութեամբ կրնանք թողութեան յոյս ունենալու : Մահուան տագնապը որ Յիսուս կրեց , կը հաստատէ թէ անիկայ խիստ շատ սիրեց մեզ : Անիկայ կ'ուզէր խմել Աստուծոյ բարկութեանը բոլոր բաժակը , և հիմա պատրաստ է յառաջ բերել իր չարչարանքները մեզի համար որ մենք խրմով փրկութիւն ստանանք :

Մեր Տէրոջը մահուան տագնապը մտածելով , աւելի սօգուտ մըն ալ ձեռք կը բերուի , որ կը մեղմէ և կը բաղդրացընէ մեր գանգատող սրտերը՝ Աստուծոյ կամացը հետ միաբանելու ու համբերելու : Թէ որ մենք Քրիստոսի հետ մէկ ենք , ու Քրիստոս մեզի հետ , անշուշտ պիտի տեսնենք թէ ան ամէնը որ Տէր կը քաշենք թեթեւ նեղութիւն մըն է , անանկ մէկ նեղութիւն մը որ մէկ վայրկեան մը կը տուէ : Աւրեմն խոնարհութեամբ ընդունինք ցաւոց բաժակը Տէրոջը ձեռքէն , մտքերնիս բերենք թէ երբ որ Յիսուս ան բաժակը խմեց , անիկայ բոլորովին դառն էր իրեն , ընդհակառակն թէ որ մենք

Քրիստոսինն ենք՝ քաղցր գութ մը կայ մեր ամենէն դառն տրամութեանը մէջն ալ :

Ինչու պէտքը չէ որ չափազանց ցաւերը խորասոյզ ընեն մեզ, երբ որ կըմտածենք թէ Յիսուս մեր կարեկից բարեկամն է . միայն թէ մենք ալ Մնոր պէս ջերմեռանդութեամբ աղօթք ընենք : Թէ որ մեր նեղութիւնը մահուան տագնապի պէս ալ ըլլայ, աղօթք ընենք՝ ի բոլոր սրտէ : Բարձրաձայն աղաղակով և արտասուօք մօտենանք Մնոր, որ կարող է մեզ փրկելու : Թէ որ մենք չունինք ուրիշ ճամբայ մը մեր նեղութիւնը յայտնելու, շարունակենք ստէպ աս խօսքը ըսելով . Ա՛յլ Հայր իմ, թէ որ աս բաժակը հնար չէ անցնիլ իղմէ, այլ պիտի խմեմ ես, ԲՈՒ ՊԵՄԲԻ Դ ԸԼԼԵՅ :

### ԵՂՕԹՎ


Ա՛յլ յամենայն ժամ օրհնեալ Մստուած՝ որ երկինքը կըբնակիս, ուր տեղ ուրախութիւն և խնդութիւն կըթագաւորէ յաւիտեանս յաւիտենից . ի՛նչպէս կրնանք մենք ըստ բաւականին երկրպագութիւն մատուցանել քու զուգակից Արգւշգ. քաղցր շնորհացը, որ Հայրական ծոցէն իջնալով՝ խոնարհեցուց իր՝ գլուխը մահուան տագնապին, ու սաստիկ գոչումով ու արցունքով իր հոգին աւանդեց : Ա՛հ, ի՛նչ կերպ սէր էր աս՝ որ Վու յաւիտենական Արգիգ. մեղի պէս մեղաւորներուն հա-



մար այնչափ խոնարհեցաւ ; որդի մը պէս եղաւ  
 և ոչ մարդու պէս (Սողմ . իբ , 6) , որ փրկէ զմեզ  
 մահէն և դժոխքէն : Ո՛վ Փրկիչ մեր՝ օգնէ  
 մեզի որ հաւատանք Քեզ , և մեծ երախտագի-  
 տութեամբ ընդունինք քու անճառելի ողորմու-  
 թիւնդ : Փրկութեան բաժակը առնենք ու Տէ-  
 րոջը անունը կանչենք (Սողմ . ճԺՂ , 13) :

Ո՛վ Հայր գթութեան և Աստուած ամենայն  
 մխիթարութեան , ամէն անգամ որ մեր սիրտը  
 նեղութիւն մը կը զգայ մեր ներսը՝ օգնէ մեզի որ  
 մտքերնիս բերենք Աստուծոյ Գառին չարչարան-  
 քը : Այցելութիւն ըրէ մեզի Սխիթարիչ Սուրբ  
 Հոգիին մխիթարութիւններովը , և տո՛ւր մեզի  
 ուրախութեան իւրը տառապանաց համար , օրհ-  
 նութեան զգեստը նեղութեան համար (Ասոյ կն ,  
 3) . ըէ մեր աղաչանքը , կատարէ մեր խնդրուած-  
 քը Յիսուս Քրիստոսի մեր Տէրոջը և Փրկչին սի-  
 րոյն համար . Ամէն :

27330













1820

1820



